INECOBANK

09.12.2024 № Ե9421

**ԵՐԱՇԽԻՔ N EA24/01180**

**1.** Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է **ՀՀ ներքին գործերի նախարարության** (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ԱՎՏՕ/2025/L-2 (չափաբաժին՝ 2)** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին **«ՖԱՎ» ՍՊԸ**-ի (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

**2.** Երաշխիքով **«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված գրավոր պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **19,743,000.00 (տասնինը միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900008000466** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

**3.** Սույն երաշխիքն անհետկանչելի է:

**4.** Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

**5.** Երաշխիքը գործում է մինչև **20/07/2025թ.**-ը ներառյալ: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի gnumner@mia.gov.am էլեկտրոնային փոստի հասցեին:

**6.** Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 17 հասցեով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

**7.** Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

**8.** Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

**9.** Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

**10.** Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

**11.** Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ**
**«ԱՐՄԱՎԻՐ» Մ/Ճ ՓՄՁ ԲԻԶՆԵՍԻ ԲԱԺՆԻ**
**ԱՎԱԳ ԲԻԶՆԵՍ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ** **ՌՈԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆ**

*Կատարող՝ Մարիամ Կոբելյան*
*Հաճախորդների վարկերի սպասարկման ծառայություն*
*Բիզնես վարկերի և լիզինգի բաժնի էքսպերտ*
*Հեռ. (+374 10) 510 510 (5380)*